ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է Փոքրաքանակ երեխաներով համալրված «Մոդուլային» տիպի հանրակրթական դպրոցների տիպարային նախագծանախահաշվային փաստաթղթերը ՀՀ Սյունիքի մարզի Կապան խոշորացված համայնքի Դավիթ Բեկ, Եղվարդ և Վերին Խոտանան բնակավայրերում տեղակապման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-21/1 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2022 թվականի հունվարի 10-ին կնքված N ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-21/1 գնման պայմանագրում 2023 թվականի մայիսի 10-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N1	ՀՀ կառավարության 06.04.2023թ. N491-Ն որոշում:
Փոփոխության նկարագրություն	N ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-21/1 պայմանագրի ֆինանսական միջոցների նվազեցում:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.8 կետ:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

10.01.2022թ. կնքված N ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-21/1 գնման պայմանագրի

ք. Երևան <<10>> 05 2023թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Հայնախագիծ>> ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Գ. Ազիզյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 6-ի N 491-Ն որոշումը և Փոքրաքանակ երեխաներով համալրված «Մոդուլային» տիպի հանրակրթական դպրոցների տիպարային նախագծանախահաշվային փաստաթղթերը ՀՀ Սյունիքի մարզի Կապան խոշորացված համայնքի Դավիթ Բեկ, Եղվարդ և Վերին Խոտանան բնակավայրերում տեղակապման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 10.01.2022թ. կնքված ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-21/1 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.8 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ փոխադարձ համաձայնությամբ լուծել Պայմանագիրը:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<Հայնախագիծ>> ԲԲԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,	ք. Երևան, Չարենցի 1
կառավարական տուն 3	<<Արդշինբանկ>> ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի	Հ/Հ 2470100038500000
գործառնական վարչություն	ՀՎՀՀ 01503291
Հ/Հ 900011040319, 900011040327,	
900011040301	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
Ա. Մկրտչյան	Գ. Ազիզյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.